ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅՈԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ № 17 - 18 (16213) ՇԱԲԱԹ, 1 ՄԱՐՏԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ԱՋԴԱԿ՝ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով, փետրվարի 27-ից երկօրյա պաշտոնական այցով Երեւանում էր գտնվում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Օդանավակայանում Վրաստանի նախագահին ու Վրաստանի պատվիրակությանը, որի կազմում էին Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Զուրաբ Աբաշիձեն, Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին, խորհրդարանի պատգամավորներ Զվիադ Կվաճանտիրաձեն, Հենզել Մկոյանը, Ռուսլան Պոդոսյանը, նախագահի աշխատակազմի ղեկավար Լաշա Աբաշիձեն, նախագահի խորհրդական Վանո Մաճավարիանին, դիմավորեցին Հայաստանի արտաքին գործերի նախարար էդվարդ Նալբանդյանը, Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, Երեւանի փոխքաղաքապետ Կամո Արեյանը, Հայաստանում Վրաստանի դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին, Վրաստանում Հայաստանի դեսպան Հովհաննես Մանուկյանը, պաշտոնական այլ անձինք:

Օդանավակայանից Վրաստանի նախագահը մեկնեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հուշարձանին՝ հարգանքի տուրք մատուցելով անմեղ զոհերի հիշատակին, ապա հուշահամալիրի Հիշողության պուրակում ծառ տնկեց:

Ապա Վրաստանի նախագահը մեկնեց Հայաստանի նախագահի նստավայր, որտեղ տեղի ունեցավ դիմավորման պաշտոնական արարողությունը:

Արարողության ավարտից հետո տեղի ունացավ Վրաստանի եւ Հայաստանի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Սերժ Սարգսյանի առանձնազրույցը, որի ավարտից հետո բանակցությունները շարունակ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՅԻՆ ԵՎ ՋՈԶԵՖ ԲԱՅԴԵՆԻՆ

Փետրվարի 22-ին, ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի հրավերով, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պաշտոնական այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Վրաստանի պաշտոնական պատվիրակության կազմում էին էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին, պաշտոնական այլ անձինք: Մեկշաբաթյա այցի շրջանակներում՝ Վրաստանի վարչապետը մասնակցեց Վաշինգտոնում Վրաստանի դեսպանության նոր շենքի բացմանը, Վաշինգտոնի Առլինկտոնյան գերեզմանատանը ծաղկեպսակ դրեց Անհայտ զինվորի գերեզմանին:

Փետրվարի 25-ին պաշտոնական այցով Վաշինգտոնում գտնվող Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ:

Հանդիպմանը ԱՄՆ նախագահը կրկին հավաստիացրեց ՆԱՏՕ-ին միավորվելուն եւ իր տարածքային ամբողջականությունը պահպանելուն ուղղված Վրաստանի կուրսի աջակցությունը:

Ղարիբաշվիլի-Օբամա հանդիպումը ծրագրված չէր եւ այն կայացավ, երբ ԱՄՆ նախագահը միացավ Սպիտակ տանը ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի եւ Իրակլի Ղարիբաշվիլու զրույցին:

ԱՄՆ նախագահը եւ փոխնախագահը Վրաստանի վարչապետին շնորհավորեցին առաջին անգամ երկրում ժողովրդավարա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱԳԾՈՒՄՆԵՐԸ ԼԱՎԱՏԵՍԱԿԱՆ ԵՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ԱՄՆ կատարած այցի շրջանակներում հանդիպում ունեցավ Համաշխարհային բանկի նախագահ Ջիմ Յոնգ Կիմի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի տնտեսական հեռանկարները եւ անցյալ տարվա ցուցանիշները: Վարչապետի վստահեցմամբ, 2014 թվականը Վրաստանի համար կլինի վճռորոշ տարի, քանզի օգոստոսին ծրագրվում է Եվրամիության ասոցիացման համաձայնագրի եւ համընդգրկուն ազատ առեւտրի պայմանագրի ստորագրումը: Նրա խոսքերով, դա «կուժեղացնի ոչ միայն քաղաքականության եւ էկոնոմիկայի, այլեւ՝ անվտանգության ոլորտում Եվրամիության հետ հարաբերությունները»: Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ ընթացիկ եւ հաջորդ տարվա տնտեսական կանխագծումներն ավելի քան լավատեսական են: Վարչապետի խոսքերով, նման պնդումը հիմնված է նաեւ Համաշխարհային բանկի կանխագծումների վրա:

Հանդիպմանը վարչապետն ընդգծեց Համաշխարհային բանկի հետ համագործակցության նշանակությունը: Վարչապետի տեղեկատվությամբ, Վրաստանի կառավարությունն անընդմեջ կապ ունի Համաշխարհային բանկի հետ եւ վերջինիս տրված հանձնարարականները միշտ օգտավետ են:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն առաջին անգամ ելույթ ունեցավ Բրյուսելում անցկացված եվրախորհրդարանի արտաքին գործերի նախարարների նիստում:

Իր ելույթում նախարարը հիմնականում խոսեց Վրաստանի եվրաինտեգրման առաջնահերթությունների, առաջիկա ծրագրերի ու նպատակների, վիլնյուսյան գագաթաժողովում ձեռք բերած հաջողությունների մասին: Նա կրկին հավաստեց եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման միտումը՝ այն անվանելով Վրաստանի ներքին եւ արտաքին քաղաքականության անկյունաքարը: Մայա Փանջիկիձեն ընդգծեց երկրի ղեկավարության պատրաստակամությունը՝ ուղղված եվրոպական արժեքների ներդրմանը: Այդ տեսանկյունից նա եվրախորհրդարանականներին հակիրճ ներկայացրեց երկրում ընթացող ժողովրդավարական բարեփոխումների ընթացքը, քաղաքական եւ տնտեսական բարեփոխումների շրջանակներում ձեռք բերած նվաճումները: Վրաստանի ԱԳ նախարարն առանձնակի ուշադրություն հատկացրեց անվտանգության եւ կայունության գործընթացում Եվրամիության նշանակալից դերին:

ԱՄՆ-Ը ՎՐԱՍՏԱՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՑՈՒՑԱԲԵՐԻ ՏԱՐԲԵՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՏ

Պաշտոնական այցով ԱՄՆ-ում գտնվող Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի հետ: Հանդիպումն անցկացվեց Վրաց-ամերիկյան ռազմավարական համագործակցության մասին խարտիայի շրջանակներում կայացած լիագումար նիստի ընթացքում:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանում իրականացվող բարեփոխումների ընթացքը: ԱՄՆ պետքարտուղարը վարչապետին խորհուրդ տվեց «ընտրություններից առաջ ուժեղացնել երկխոսությունն երկրի ներսում, ինչը կհզորացնի նրան»: «Ինչ վերաբերում է օրենքին եւ ժողովրդավարությանը, ապա անցկացված ընտրություններից հետո ինձ հաճելի է ձեզ այստեղ տեսնելը: Նախ, ցանկանում եմ ձեզ շնորհավորել անկախ ժողովրդավարական եւ ազատ նախագահական ընտրությունների անցկացման կապակցությամբ: Գործընթացի թափանցիկությունն ակնհայտ էր եւ դա ողջունելի է ու մենք բոլոր կողմերին կոչ ենք անում երկրի ներսում շարունակել երկխոսությունն ու բանավեճերը»,- հայտարարեց Ջոն Քերրին:

«Ձեր կառավարությունը ապագայի տեսլական ունի: Ես վստահ եմ, որ այն երկիրը կտանի ճիշտ ուղղությամբ»,- հայտարարեց

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ը՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՕԿՈՒՊԱՑՄԱՆ ՕՐ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ՅՈՒՆԿԵՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Փետրվարի 25-ին նշվեց վրացական առաջին ժողովրդավարական Հանրապետության բռնազավթման 93-րդ տարելիցը:

Վրաստանի խորհրդային օկուպացման օրվա կապակցությամբ Թբիլիսիում եւ Քութայիսիում խորհրդարանի նախկին եւ նոր շենքերի վրա իջեցված էին պետական դրոշները: Քութայիսիում խորհրդարանի շենքում բացվեց լուսանկարների ցուցահանդես, որտեղ ցուցադրվեցին խորհրդային ռեժիմի կողմից Վրաստանի բռնազավթումն արտացոլող լուսանկարներ:

Տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակներում, Վրաստանի խորհրդարանի նախկին շենքի բակում 93 տարի առաջ Կոջորիի պաշտպանական մարտերում զոհված յունկերների հուշահամալիր այցելեցին Վրաստանի իշխանության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հուշահամալիրը ծաղկեպսակներով զարդարեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, պաշտոնական այլ անձինք:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ԱԶԴԱԿ՝ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վեցին ընդլայնված կազմով՝ երկու երկրների պատվիրակությունների անդամների մասնակցությամբ:

Սերժ Սարգսյանը ողջունեց Վրաստանի նախագահին եւ նրա գլխավորած պատվիրակությանը Հայաստանում եւ հույս հայտնեց, որ Գիորգի Մարգվելաշվիլու՝ նախագահի կարգավիճակում առաջին պաշտոնական այցը Հայաստան նոր ազդակ կհաղորդի երկու երկրների միջեւ համագործակցությանը, հայ եւ վրաց ժողովուրդների եղբայրությանն ու բարեկամությանը: Հանդիպման պատեհ առիթով Սերժ Սարգսյանը մեկ անգամ եւս շնորհավորեց Գիորգի Մարգվելաշվիլուն Վրաստանի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Սերժ Սարգսյանը համոզվածություն հայտնեց, որ այցի շրջանակներում կկայանան հայ-վրացական օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի ուղղությամբ արդյունավետ քննարկումներ, ինչը թույլ է տալիս բարձրացնել անընդհատ զարգացող երկկողմ հարաբերությունների մակարդակը:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին շնորհակալություն հայտնեց հրավերի եւ ջերմ ընդունելության համար, ընդգծելով, որ Հայաստանի ու նրա մայրաքաղաքի հետ իրեն կապում են շատ ջերմ հիշողություններ, բացի այդ, նրա խոսքերով, այս տարածաշրջանում գոյություն ունի նաեւ երկու ժողովուրդների համատեղ կյանքի բազմադարյա մշակույթ: Վրաստանի նախագահը նշեց, որ, իր կարծիքով, այսօր երկու երկրները շարունակում են կառուցել այն, ինչի հիմքն արդեն իրենց նախնիները դրել են: Նա ընդգծեց, որ վիրահայերը շատ բան են անում Վրաստանի համար. նրանք ամրապնդում են Վրաստանի տնտեսությունը, հարստացնում են մշակույթը: Գիորգի Մարգվելաշվիլու համոզմամբ, այն, որ Վրաստանում հայերը չեն կորցնում իրենց ավանդույթները եւ սրբորեն պահպանում են դրանք, ինչպես նաեւ մշակույթը, լեզուն, այդպիսով, ակնհայտորեն, հարստացնում են նաեւ վրացական մշակույթը: Նա նշեց, որ Վրաստանն ազատության եւ մշակույթների հանդիպման վայր է, որտեղ տարբեր մշակույթներ զարգանում ու նոր ծիլեր են տալիս:



Հայաստանի եւ Վրաստանի նախագահները նեղ, ապա՝ ընդլայնված կազմով բանակցությունների արդյունքներն ամփոփեցին ՁԼՄ-երի առջեւ հայտարարությամբ:

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է»

Տնտեսական հարաբերությունների խորացումը հարեւանների հետ Վրաստանի առաջնահերթություններից է, եւ այդ առումով նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին խիստ կարեւորեց Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացումն ու խորացումը: Այդ մասին Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց Հայաստանի նախագահի հետ համատեղ մամլո ասուլիսում ու հավելեց, որ Վրաստանն ամեն ինչ անելու է այս առաջնահերթություններն առաջ տանելու եւ զարգացնելու համար:

Գիորգի Մարգվելաշվիլին նշեց, որ Հայաստանի նախագահի հետ հանդիպման ընթացքում կարեւորվել է հայ ժողովրդի դերը Վրաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտների զարգացման գործում: «Իմ պատվիրակության մեջ ազգությամբ հայ քաղաքական գործիչներ, պատ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՅԻՆ ԵՎ ՋՈՆԵՖ ԲԱՅԴԵՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կան ուղիով իշխանափոխության կապակցությամբ: Ամերիկյան ղեկավարները Վրաստանին շնորհակալություն հայտնեցին նաեւ գործընկերային հավատարմության համար: Բարաք Օբաման շնորհակալություն հայտնեց Աֆղանստանում ՆԱՏՕ-ի առաքելության շրջանակներում Վրաստանի ավանդի համար:

Հանդիպմանը քննարկվեցին երկու երկրների միջեւ ռազմավարական համագործակցության հետ առնչվող հարցեր: Հանդիպմանը Վրաստանի վարչապետը վստահություն հայտնեց, որ 2014 թվականին Վրաստանը կստորագրի Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը եւ կոնկրետ քայլեր կձեռնարկի ՆԱՏՕ-ի անդամակցության ուղղությամբ: Զրուցակիցներն անդրադարձան նաեւ Վրաստանի տարածքում առկա հակամարտությունների կարգավորման հարցին: Հանդիպմանը ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման դրական գնահատեց Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու վրացական կողմի ձգտումը: ԱՄՆ նախագահը կոչ արեց կառուցողական լինել նաեւ ապագայում: Ղարիբաշվիլին ԱՄՆ նախագահին խնդրեց Ռուսաստանի հետ բանակցությունների օրակարգում անպայման ընդգրկել Ռուսաստանի կողմից Վրաստանի բռնազավթված տարածքների մասին հարցը:

«Մեր կառավարությունը լիարժեք աջակցություն ստացավ ԱՄՆ նախագահի եւ փոխնախագահի կողմից: Հանդիպմանը պատրաստակամություն հայտնվեց Վրաստանի հետ ԱՄՆ-ի փոխհարաբերությունների ամրացման եւ խորացման ուղղությամբ: Ցանկանում եմ ընդգծել, որ Վրաստանը եւ ԱՄՆ հանդիսանում են ռազմավարական գործընկերներ, եւ մենք հնարավորինս կնպաստենք այդ հարաբերությունների խորացմանը»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին Սպիտակ տանը կայացած հանդիպման ավարտից հետո:

ԱՄՆ-Ը ՎՐԱՍՏԱՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՑՈՒՑԱԲԵՐԻ ՏԱՐԲԵՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԱՄՆ-ի պետքարտուղարը:

Իր կողմից Իրակլի Ղարիբաշվիլին Ջոն Քերրիին շնորհակալություն հայտնեց աջակցության համար, որը ԱՄՆ-ը Վրաստանին ցուցաբերում է եվրաինտեգրացման ճանապարհին եւ երկրի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պահպանման հարցում:

Հանդիպմանը կողմերն անդրադարձան նաեւ հակամարտության գոտիներում ստեղծված իրավիճակին: «ԱՄՆ հավատարիմ է մնում Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության սկզբունքին: Մենք դատապարտում ենք Վրաստանի տարածքների բռնազավթումը եւ վերաբաշխումը: Ռուսաստանին կոչ ենք անում կատարել 2008 թվականին ստանձնած պարտավորությունները»,- հայտարարեց ԱՄՆ պետքարտուղարը:

Միաժամանակ նա նշեց, որ ԱՄՆ Վրաստանին լրացուցիչ օգնություն կցուցաբերի տարբեր ուղղություններով: Նրա խոսքերով, օգնությունը կընդգրկի եվրաինտեգրացիան, ինչպես նաեւ տնտեսական բարեփոխումների ոլորտները:

Հանդիպմանը ամերիկյան կողմն ընդգծեց, որ Վրաստանի կառավարությունը կողմնորոշված է ապագայի ուղղությամբ եւ համոզված է, որ այն երկիրը կառաջնորդի ճիշտ ուղղությամբ:

Իր հերթին, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ Վրաստանը բարձր է գնահատում ԱՄՆ-ի՝ ասոցիացման համաձայնագրի հետ կապված գործընթացում ցուցաբերած ջանքերը:

Հանդիպմանը նշվեց, որ գարնանը ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին կայցելի Վրաստան:

ԱՏԼԱՆՏՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆՈՒՅՆՆ Է, ԻՆՉ ՄՅՈՒՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԵՏ»

Փետրվարի 26-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Վաշինգտոնում ելույթ ունեցավ Ատլանտյան խորհրդում եւ ներկայացրեց երկրի առաջնահերթությունները:

Ինչպես նշեց վարչապետը, ժողովրդավարական բարեփոխումները Վրաստանի համար ունեն մեծ նշանակություն, քանի որ դրանք օգնում են պահպանել քաղաքական կայունությունը: Առանձնապես այն պայմաններում, երբ արտաքին սպառնալիքներն իրենց առավել զգացնել են տալիս:

Ատլանտյան խորհրդում՝ ի պատիվ Վրաստանի վարչապետի եւ վրաց պատվիրակության անդամների, կազմակերպվեց ընդունելություն:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Ատլանտյան խորհրդում ելույթից հետո պատասխանելով Հայաստանի Ազգային կոմիտեի ներկայացուցիչ Լիլի Գասպարյանի հարցին, ի պատասխան հայտարարեց, որ Սամցխե-Ջավախեթիի նկատմամբ վերաբերմունքը նույնն է, ինչ երկրի մյուս տարածշրջանների հետ: «Նախկին կառավարության խտրական քաղաքականության արդյունքում Սամցխե-Ջավախեթիում տնտեսական ծանր իրավիճակ է: Որպեսզի դա ուղղենք, ցանկանում եմ ձեզ հարցնել, կհամաձայնեք, արդյոք, միջազգային օգնության հարցում, որպեսզի ԱՄՆ-ը այդ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման համար հատկացնի գումարներ»,- Գասպարյանին հարցրեց Վրաստանի վարչապետը: «Հավաստացնում եմ, որ ոչ միայն Սամցխե-Ջավախեթին, այլեւ Վրաստանի մյուս տարածաշրջանները գտնվում են ծանր վիճակում: Մենք առանց որեւէ բաժանման եւ խտրականության ունենք բոլոր տարածաշրջանների զարգացման ծրագիր: Այնպես որ, հավատացած եղեք, ես Սամցխե-Ջավախեթիին կվերաբերեմ այնպես, ինչպես մյուս տարածաշրջաններին: Սամցխե-Ջավախեթին իմ տարածաշրջանն է, եւ դա նշանակում է, որ ողջ Վրաստանն իմ տարածաշրջանն է»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:



ՈՒԿՐԱԻՆԱ

ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

Փետրվարի 22-ին Ուկրաինայի Գերագույն ռադան նոր ղեկավար է ընտրել: Խորհրդարանի 333 ներկա պատգամավորներից 288-ի կողմ քվեարկությամբ ռադայի ղեկավար է ընտրվել ամենախոշոր «Բատկիվշչինա» ընդդիմադիր խմբակցության փոխնախագահ, Յուլիա Տիմոշենկոյի «աջ ձեռքը» համարվող Ալեքսանդր Տուրչինովը: Նույն օրը, Ուկրաինայի Գերագույն ռադան որոշել է երկրում արտահերթ ընտրությունների անցկացման օրը եւ կողմ է քվեարկել նախագահ Վիկտոր Յանուկովիչի հրաժարականին: Ռադան երկրում արտահերթ ընտրությունների օր է նշանակել 2014թ. մայիսի 24-ը:

Ուկրաինայի Գերագույն ռադան փետրվարի 22-ին քվեարկել է նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոյին ազատ արձակելու օգտին: Ռադայի պատգամավորները 322 կողմ ձայնով ընդունել են որոշում, որը թույլ է տալիս քրեական պատասխանատվության ենթարկելուց ազատել Յուլիա Տիմոշենկոյին: Նույն օրը Ուկրաինայի նախկին վարչաետ Յուլիա Տիմոշենկոն կալանքից ազատ է արձակվել: Նա լքել է Խարկովի «Ուկրզալիզնիցի» հիվանդանոցը, որտեղ բուժվում էր՝ կալանքի տակ գտվելով: Նա անմիջապես մեկնեց Կիեւ, ելույթ ունեցավ Անիկախության հրապարակում:

Փետրվարի 23-ին Ուկրաինայի Գերագույն ռադան խորհրդարանի նախագահին վերապահեց երկրի նախագահի պարտականությունները: Ուկրաինայի խորհրդարանը պաշտպանեց Արսենի Յացենյուկի թեկնածությունը վարչապետի պաշտոնում: Գերագույն ռադայի կողմից նշանակված Ուկրաինայի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ալեքսանդր Տուրչանովը ստորագրել է Արսենի Յացենյուկին կառավարության ղեկավար նշանակելու մասին հրամանագիրը: Նշենք, որ Ուկրաինայի ներքին գործերի նախարարի պաշտոնակատար է հաստատվել խարկովցի Արսեն Ավագովի թեկնածությունը:

Փետրվարի 24-ին Ուկրաինայի Գերագույն ռադան առաջին ընթերցմամբ հավանություն է տվել Հաագայի Միջազգային քրեական դատարանին դիմելու որոշմանը, որով նա խնդրում է պատասխանատվության ենթարկել Վիկտոր Յանուկովիչին եւ այլ պաշտոնատար անձանց «2013 թվականի նոյեմբերի 30-ից մինչեւ 2014 թվականի փետրվարի 22-ն ընկած ժամանակաշրջանում քաղաքացիների բողոքի խաղաղ ակցիաների ժամանակ մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար»: Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը Կիեւում հանդիպում ունեցավ Ուկրաինայի իշխանության ներկայացուցիչների հետ: Բանակցությունների գլխավոր թեման եղել է երկրին միջազգային ֆինանսական օգնություն ցուցաբերելու հնարավորությունը: Նշվել է, որ Եվրամիությունը պատրաստ է 20 մլրդ եվրո հատկացնել Ուկրաինայի նոր կառավարությանը բարեփոխումներ իրականացնելու համար:

Իր հերթին Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը հայտարարել է, որ չի պատրաստվում հրաժարական տալ, քանի որ լեգիտիմ ընտրված նախագահ է: Նա նշել է, որ պատասխանատու է երկրում ստեղծված իրավիճակի համար եւ ամեն ինչ կանի խաղաղություն հաստատելու համար: Վիկտոր Յանուկովիչը հայտարարությամբ դիմել է ուկրաինական ժողովրդին, որում հայտնել է, թե պաշտպանություն է խնդրել Ռուսաստանից: Ռուսաստանը բավարարեց իր տարածքում անձնական անվտանգությունն ապահովելու մասին Վիկտոր Յանուկովիչի խնդրանքը: Ավելի վաղ Վիկտոր Յանուկովիչը համաձայնել էր ստորագրել երկրում արտահերթ նախագահական ընտրություններ նշանակելու որոշումը եւ հայտարարել, որ արտահերթ նախագահական ընտրությունները, հավանաբար, տեղի կունենան դեկտեմբերին:

Նշենք, որ, ներկա դրությամբ, իրավիճակը ծայրաստիճան արված է Ղրիմի ինքնավար հանրապետությունում եւ Ուկրաինայի արեւելյան, հիմնական ռուսալեզու բնակչություն ունեցող տարածքներում:

Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՈՒՂԵՐՁ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի վարչապետ, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Ղարիբաշվիլին ուղերձով դիմեց կուսակցության անդամներին:

Նրա հայտարարության մեջ նշված է, որ կուսակցությունն անցնելու է գործունեության նոր տեսակի եւ այդ աշխատանքում կուսակցության անդամների ու ակտիվիստների գործունեությունը մեծ նշանակություն ունի:

«Մոտ ժամանակներս մենք տարածաշրջաններում կանցկացնենք կուսակցական խորհրդաժողովներ: Ցանկանում եմ կուսակցության գլխավոր քարտուղար Կախի Կալաձեին եւ քաղաքական քարտուղար Գիորգի Վոլսկուն հանձնարարել կուսակցական խորհրդաժողովների կազմակերպումը»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: Նրա խոսքերով, կուսակցությունն սկսելու է գործել նոր ուժով: «Ուստի ես կուսակցության բոլոր անդամներին, բոլոր ակտիվիստներին կոչ եմ անում ցուրաբերել ակտիվություն, մասնակցել մեր հանդիպումներին, կուսակցական խորհրդաժողովներին եւ ավանդ ներդնեն կուսակցության նորացման ու հզորացման գործում: Վստահ եմ, որ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստանը» կդառնա այն կուսակցությունը, որն իր շուրջ կհավաքի հազարավոր նոր կողմնակիցների, կպաշտպանի նրանց շահերը եւ ավանդ կներդնի մեր երկրի ժողովրդավարական զարգացման գործում: Ցանկանում եմ օգտվել առիթից եւ դիմել երիտասարդությանը՝ միացեք մեզ: Ցանկանում եմ ձեզ հետ միասին կառուցել հզոր Վրաստան»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ:

Կուսակցության ղեկավարը գնահատելով անցած երկու տարիները, հայտարարեց, որ Վրաստանի համար մեծ նշանակություն ունեցող այդ փուլում Բիձինա Իվանիշվիլու նախաձեռնությամբ հիմնվեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը, որը միավորեց ընդհանուր գաղափարախոսության եւ արժեքներ ունեցող մարդկանց եւ կանգնեց երկրի ծառայության դիրքերում:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի կառավարությունը ծրագրում է սկսել ներդրումային միջավայրի բարեփոխման համար նոր ռազմավարություն: Մասնավորապես, «Վրաստան-2020» ծրագրի շրջանակներում կդյուրացվի հարկային պատժամիջոցների վարչարարությունը եւ կիրականացվի դրանց օպտիմիզացումը:

Նաեւ ծրագրված է ապաքրեականացնել տնտեսական իրավախախտումները եւ նվազեցնել հարկային ստուգումների վաղեմության ժամկետները:

«Հարկային օրենսգրքում կատարելիք փոփոխությունները կհասցվեն նվազագույնի եւ հարկատուների բոլոր պարտավորությունները կսահմանվեն օրենքով, իսկ պետություն-բիզնես փոխհարաբերությունը կանցնի գործարարության շրջանակներում»,- ասված է ռազմավարությունում:

«Չնայած 2004 թվականին սկսած Վրաստանի էկոնոմիկայի ազատականացման, բյուրոկրատական արգելքների վերացմանը, եւ հարկային ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված բարեփոխումներին, դեռեւս մնում են սկզբունքային բնույթի հիմնախնդիրներ, որոնք արգելակում են գործարարության մրցունակության բարձրացմանը եւ տեւական աճին: Մասնավորապես, հիմնախնդրային են մնում շուկայում ազատ մրցակցության ապահովումը, անվճարունակության, կոմերցիոն վեճերի եւ մյուս հիմնախնդիրների հետ կապված հարցերից ծագած մարտահրավերները, որոնք անհանգստացնում են գործարարներին: Արդյունքում այդ ամենը հանգեցնում է ներդրողների վստահության նվազեցմանը, դրանք արտահայտվում են նաեւ երկրի միջազգային վարկորոշիչներում, մասնավորապես սննկացման ընթացակարգով երկիրը զբաղեցնում է 88-րդ տեղը, իսկ վարկային հայտերի բավարարման առումով՝ Վրաստանի ցուցանիշը կազմում է 33,6 տոկոս, այն դեպքում, երբ տարածաշրջանում միջին ցուցանիշը՝ 37,1, իսկ զարգացած երկրներում 70 տոկոս է: Պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել բիզնես միջավայրի բարելավման եւ ներդրողների շահագրգռվածության մակարդակի բարձրացման երկարաժամկետ ապահովման համար, առանձնապես այն հարցում, որն առնչվում է սեփականության իրավունքի պաշտպանությանը»,- ասված է ռազմավարության փաստաթղթում:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՊԱԱՏԱ ՁԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ. «ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆՈՒՄՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Վրաստանի պետնախարար Պաատա Ձաքարեիշվիլին գտնում է, որ Վրաստանի վերինտեգրման հարցերով նախարարության վերանվանումը հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության նախարարության, առավել հստակորեն է արտահայտում ներկայիս կառավարության մոտեցումը բռնազավթված Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածքների հակամարտությունների կարգավորման հարցում:

Պաատա Ձաքարեիշվիլու խոսքերով, նախարարության վերակառուցումն անհրաժեշտություն էր: «Այն միակ գերատեսչությունն է, որի հաջողությունը կախված է ընդդիմադիրների հետ ընդհանուր հայտարարի հասնելու գործից: Մենք հակամարտության կողմերին շահագրգռելու ենք բանակցային գործընթաց սկսելու համար»,- նշեց Ձաքարեիշվիլին:

Ըստ պետնախարարի, հակամարտությունների վերջնական կարգավորումն առնչվում է երեք հիմնական հարցերի՝ Վրաստանի ժողովրդավարականությունը եւ եվրոպական ինստիտուտների ինտեգրումը, Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումը եւ աբխազական ու Ցխինվալիի հանրության շահերի առավելագույն հաշվառմամբ, նրանց հետ կապերի հաստատումը:

ԴԱՏԱԿԱՆ

ՎԱՆՈ ՄԵՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԾ 4,5 ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Քութայիսի քաղաքային դատարանը 2011 թվականի մայիսի 26-ին Թբիլիսիում ընդդիմության ակցիան ցրելու գործով Վրաստանի նախկին վարչապետ Վանո Մերաբիշվիլուն 4,5 տարվա ազատազրկման է դատապարտել:

Քաղաքային դատարանը որոշում է ընդունել նաեւ 1,5 տարի ժամկետով նախկին վարչապետին արգելել որեւէ պաշտոն զբաղեցնել պետական կառույցներում:

Վրաստանի գլխավոր դատախազությունը վերը նշված գործով մեղադրանքները Մերաբիշվիլուն ներկայացրել էր 2013 թվականի մայիսի 28-ին: «Այն ժամանակ (2011 թվականի մայիսին) ներքին գործերի նախարարի պաշտոնն զբաղեցնող Վ.Մերաբիշվիլին մեղադրվում է պաշտոնական լիազորությունները վերազանցելու մեջ՝ ծանրացուցիչ հանգամանքներում»,- հաղորդել է Գլխավոր դատախազությունը:

Դատական նիստի ավարտվելուց հետո մեղադրյալի փաստաբան Գիորգի Չիվիաշվիլին լրագրողներին հայտարարել է, որ «դատարանի վճիռը բողոքարկվելու է վերադաս բոլոր ատյաններում»:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՍՐԲԱՑՎԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻՆ



Վրաց Ուղղափառ եկեղեցու հավատացյալները հարգանքի տուրք են մատուցում 1995 թվականին վախճանված եւ 2012 թվականին Ուղղափառ եկեղեցու կողմից սրբացված ծայրագույն վարդապետ Գաբրիելի (Գոդերձի Ուրգեբաձեի) հիշատակին:

Նշենք, որ սրբացված հոգեւորականի ածյունը Մցխեթայից բերվեց Թբիլիսի, մի քանի օր հավատացյալների համար դրվեց մայրաքաղաքի Սուրբ Երրորդության տաճարում, ապա կրկին կվերահուղարկավորեն Մցխեթայում: 1929 թվականին ծնված, 1954 թվականին հոգեւորական օծված հայր Գաբրիելը իր հակակոմունիստական քարոզչության համար երկար տարիներ անցկացրեց հոգեբուժարանում: Հոգեբուժարանից դուրս գալուց հետո հայր Գաբրիելը մնչեւ կայքի վերջը ապրում էր Մցխեթայի մենաստանում: Նա վախճանվեց 1995 թվականին:

Հատկանշական է, որ արյան անալիզի համար վիրաբույժ Զուրաբ Վարազիշվիլու կողմից հայր Գաբրիելից վերցրած արյունը մինչ օրս չի մակարդվել, իսկ նրա շիրիմի վրա վառվող ճրագից վերցրած ձեթը, դեռեւս գիտականորեն չպարզաբանված հանգամանքներում, հայտնի է բուժիչ հրաշագործ հատկություններով:



ԱԲԱՇԻՁԵ-ԿԱՐԱՍԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեի եւ ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Գրիգորի Կարասինի միջեւ Պրահայում կայանալիք հերթական հանդիպումը հետաձգվել է եւ տեղի կունենա մարտի 14-ին:

«Մենք որոշել ենք մեկ շաբաթով հետաձգել մեր հանդիպումը: Դրան հատուկ քաղաքական հնչեղություն մի տվեք»,- ասաց Կարասինը:

«Մեր հանդիպումը, որը պետք է կայանար մարտի 4-5-ին, հետաձգվել է եւ տեղի կունենա մարտի 14-ին»,- իր հերթին հայտնեց Աբաշիձեն:

Նախօրյակին ՌԴ ԱԳ նախարարությունը տեղեկացրել է, թե չի սպասում, որ Պրահայում կայանալիք ռուս-վրացական կոնսուլտացիաների ընթացքում կքննարկվի Մոսկվայի ու Թբիլիսիի միջեւ բարձր մակարդակով բանակցություններ անցկացնելու հնարավորությունը:

ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱՐԲԱՆՅԱԿՈՎ

«Ազերկոսմոս» ընկերությունն սկսել է Ադրբեջանի Azerspace/Africasat-1a հեռուստահաղորդակցական արբանյակի միջոցով Վրաստանի հեռուստալիքների բաց ձեւաչափով փորձնական հեռարձակումները:

Ներկայում ադրբեջանական արբանյակի միջոցով կատարվում են վրացական Obiegtivi TV, 2 TV, Comedy Arkhi, Vip TV, Trialeti, TV 3, GDS TV եւ Guality Channel հեռուստալիքների փորձնական հեռարձակումները:

ԱՎԱՐՏՎԵԼ Է ՀԱԿԱԹՄՐԱՆՅՈՒԹԱՅԻՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեյենկոյի հայտարարությամբ, գերատեսչությունում ավարտվել է հակաթմրանյութային նոր օրինանախագծի մշակումը:

Ըստ նախարարի, օրինանախագծում մնացել է մշակել մի կետ, ըստ որի, հնարավոր կլինի կիրարկել կենսախմբի թմրանյութերի օգտագործման համար նախատեսված քրեական պատասխանատվությունը: «Հակաթմրանյութային քաղաքականությունը միավորող նոր օրինագծի մշակումը գործնականում ավարտվել է: Վրաստանը միանում է միջազգային այն հռչակագրին, ըստ որի, իրականացվում է կենսաքիմիական հիմունքներով կազմված նյութերի օգտագործման քրեականացումը: Այսինքն՝ այսուհետեւ այդ ամենը կընկալվի որպես անօրինական նյութ եւ անօրինական թմրանյութերի վրա կիրարկվող վերահսկողություն, եւ արգելքը կտարածվի նաեւ դրանց վրա»,- հայտարարեց Սերգեյենկոն:

ՈՒՂԵՎԱՐՁԸ ԿՄԱՐՎԻ ԱՅԼ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՇՎԻՆ

Թբիլիսիի բյուջեի չհաստատման դեպքում փետրվարի վերջից 600 հազար քաղաքացիների ուղեվարձը կմարվի այլ նախագծերի հաշվին: Այդ մասին հայտարարեց Թբիլիսիի քաղաքային տրանսպորտի ծառայության ղեկավար Ակակի Ջոխաձեն: Նրա խոսքերով, բյուջեի հաստատման ձգձգումը որոշակի հիմնախնդիրներ է առաջացրել: Մասնավորապես, ընդհատվել է քաղաքային ավտոբուսների ձեռքբերման մրցույթի հայտարարումը: Ակակի Ջոխաձեի պնդմամբ մրցույթ կհայտարարվի եւ կարճ ժամանակում ավտոբուսների ձեռքբերման հարցը կլուծվի:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ԱՁԴԱԿ՝ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

գամավորներ կան, ինչը շատ կարեւոր հանգամանք է: Այս հանդիպումն ամուր հիմք է ստեղծում վրաց-հայկական հարաբերությունների հետագա զարգացման համար»,-հայտարարեց Մարգվելաշվիլին՝ հավելելով, որ ամեն ինչ անելու է վրաց-հայկական հարաբերությունները խորացնելու համար:

«Մենք կապված ենք ոչ միայն դարավոր բարեկամական կապերով, այլ նաեւ տնտեսապես ամուր կապերով: Շատ կարեւոր է, որ երկու երկրների նախագահները բազմաթիվ հարցերի վերաբերյալ ունեն նույն դիրքորոշումը»,- ասաց Վրաստանի նախագահը՝ հավելելով, որ իրականացրել է այցեր երեք հարեւան երկրներ եւ բոլոր հարեւաններն էլ կարեւորում են Վրաստանի հետ հարաբերությունների խորացումը: Շնորհակալություն հայտնելով Սերժ Սարգսյանին ջերմ ընդունելության համար, Գիորգի Մարգվելաշվիլին ասաց, որ Թբիլիսում սպասում են Հայաստանի նախագահի այցին:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՄԵՐ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԽՈՉԸՆԴՈՏԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»

Հայաստանի անդամակցությունը Մաքսային միությանը, իսկ Վրաստանի որոշումը՝ շարժվել եվրոպական ին-

տեգրացիայի ուղղությամբ չի խոչընդոտի երկու երկրների միջեւ տնտեսական հարաբերությունների շարունակմանն ու զարգացմանը: Այդ մասին հայտարարեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը՝ Վրաստանի նախագահի հետ համատեղ մամլո ասուլիսում եւ հավելեց, որ այդ համագործակցությունը միայն կնպաստի երկու երկրների գործարար կապերի ամրապնդմանը:

Սերժ Սարգսյանը նշեց նաեւ, որ հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները տարածաշրջանում կայունության պահպանման լավագույն հիմքն են: Միայն 2013 թվականին տեղի է ունեցել մեկ վարչապետական եւ 15 նախարարական այցելություն, ինչը, Սերժ Սարգսյանի գնահատմամբ, խոսում է քաղաքական երկխոսության բարձր մակարդակի մասին: Կայանալիք հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովի նիստն էլ կնախանշի հայ-վրացական հարաբերությունների հետագա զարգացման ուղենիշները: Ելույթի ժամանակ Սերժ Սարգսյանը կարեւորեց նաեւ երկու երկրների միջեւ անվտանգության ոլորտում համագործակցությունը՝ հավելելով, որ վրաց գործընկերոջ հետ ձեռք է բերել պայմանավորվածություն՝ միջազգային հարթակներում զգայուն հարցերի վերաբերյալ ցուցաբերելու երկկողմ հավասարակշռված դիրքորոշում: «Մենք վստահ ենք, որ ցանկացած հակամարտություն հնարավոր է կարգավորել միայն խաղաղ ճանապարհով՝ միջազգային նորմերին համապատասխան, բանակցությունների միջոցով»,- ասաց նախագահ Սերժ Սարգսյանը՝ հավելելով, որ այցը որակական նոր լիցք կհաղորդի հայ-վրացական եղբայրական հարաբերությունների ամրապնդմանը եւ երկկողմ ողջ ներուժի օգտագործմանը:

Ավարտին, Սերժ Սարգսյանը խնդրեց իր շնորհակալությունը փոխանցել Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն, որ իր հիմնադրամից գումար է հատկացրել Թբիլիսիի հայկական եկեղեցիներից մեկի վերականգնման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ

Հայաստան պաշտոնական այցի շրջանակներում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին աշխատանքային ճաշի ձեւաչափով հանդիպում է ունեցել Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ:

Հանդիպմանը զրուցակիցները կարեւորեցին երկու հարեւան եւ բարեկամ երկրների միջեւ բոլոր ոլորտներում

կապերի զարգացումն ու սերտացումը:

Նշվեց, որ երկու երկրների կառավարությունները պետք է շարունակեն ջանքեր գործադրել՝ երկկողմ առեւտրաշրջանառության մակարդակն առաջիկայում է՛լ ավելի բարձրացնելու եւ համատեղ տարբեր ծրագրեր իրականացնելու համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ՝ Ի ՊԱՏԻՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ

Փետրվարի 27-ի երեկոյան Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի անունից՝ ի պատիվ պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու՝ տրվեց պաշտոնական ընթրիք:

Ընթրիքին Սերժ Սարգսյանը եւ Գիորգի Մարգվելաշվիլին փոխադարձ բաժակաճառերում անդրադարձան հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությանն ու բազմում ընդհանրություններով լի պատմական անցյալին, երկու դրացի երկրների հարաբերությունների ներկայիս բարձր մակարդակին եւ այդ հարաբերությունների շարունակական խորացման ու փոխշահավետ համագործակցության զարգացման հնարավորություններին: Սերժ Սարգսյանը եւ Գիորգի Մարգվելաշվիլին երկուստեք ընդգծեցին, որ պատմության ընթացքում բոլոր իրադարձությունների ժամանակ հայ եւ վրաց ժողովուրդները եղել են կողք-կողքի, շատ դեպքերում՝ նաեւ միասին, իսկ անկախության ձեռքբերումից հետո, Հայաստանը եւ Վրաստանը զարգացնում են միջպետական հարաբերությունները երկու ժողովուրդների բարեկամության ամուր հիմքի վրա:

Գիորգի Մարգվելաշվիլին շնորհակալություն հայտնեց Սերժ Սարգսյանին՝ ջերմ հյուրընկալության եւ այն բարեկամական մթնոլորտի համար, որ այսօր տիրում է Երեւանում: Վրաստանի նախագահը վստահեցրեց, որ այդպիսի մթնոլորտ կլինի նաեւ Թբիլիսիում, երբ Հայաստանի նախագահը, ընդունելով իր հրավերը, այցելի Վրաստան:

Հայաստանի եւ Վրաստանի նախագահները բաժակ բարձրացրին հանուն Հայաստանի եւ Վրաստանի միջեւ համագործակցության հետագա ամրապնդման, հանուն երկու պետությունների խաղաղության եւ եղբայրական ժողովուրդների բարեկեցության:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Փետրվարի 27-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հետ:

Ողջունելով Վրաստանի նախագահին, Հովիկ Աբրահամյանը համոզմունք հայտնեց, որ նրա պաշտոնական այցը Հայաստան կխորացնի երկու երկրների միջեւ բազմակողմ համագործակցությունը եւ կամրապնդի ժողովուրդների բազմադարյա բարեկամությունը: Աժ նախագահը կարեւոր համարեց միջխորհրդարանական համագործակցության հետագա խորացումը՝ այս համատեքստում բարձր գնահատելով խորհրդարանական դիվանագիտության նշանակությունը երկկողմ եւ բազմակողմ հարաբերությունների ամրապնդման գործում:

Շնորհակալություն հայտնելով հանդիպման համար՝ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նշեց, որ Վրաստանը կարեւորում է բարեկամ Հայաստանի հետ տարբեր ուղղություններով համագործակցության զարգացումը եւ խորացումը: «Մենք շահագրգիռ ենք, որ տարածաշրջանում լինի խաղաղություն եւ կայունություն»,- ասաց Վրաստանի նախագահը: Նրա խոսքով՝ Վրաստանը կողմնակից է բարիդրացիական հարաբերություններ պահպանել բոլոր հարեւանների հետ՝ հանուն Հարավային Կովկասի զարգացման:

ԿԱՅԱՑԱՎ ՀՐԱԺԵՇՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 28-ին Հայաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցավ պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հրաժեշտի արարողությունը:

Մինչ այդ տեղի ունեցած առանձնազրույցի ընթացքում երկու երկրների նախագահներն ամփոփեցին Գիորգի Մարգվելաշվիլու այցի շրջանակներում կայացած բանակցությունների արդյունքները, որոնք, կողմերի համոզմամբ, նոր ազդակ կհաղորդեն վրաց-հայկական բարեկամական հարաբերությունների զարգացմանն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում համագործակցության խորացմանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Հայաստան կատարած այցի շրջանակներում, փետրվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիպում ունեցավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տեր Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Ողջունելով Վրաստանի նախագահի եւ նրան ուղեկցող պատվիրակության այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց երկու երկրների միջեւ առկա համագործակցության առիթով եւ շեշտեց, որ նման փոխայցելություններն ավելի են նպաստում երկու ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների զորացմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց միեւնույն տարածաշրջանում կողք-կողքի ապրող երկու հավատակից ժողովուրդների փոխադարձ զորակցության եւ եղբայրության ամրապնդման կարեւորությունը, ինչին մշտապես ուղղված են եղել Հայ Եկեղեցու ջանքերը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Վրաստանի հայ համայնքին եւ նրա պատմական ու ներկայիս մեծ ներդրումին եւ դերակատարությանը երկրի տնտեսական, մշակութային, կրթական ու այլ բնագավառներում: Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակություն հայտնեց Վիրահայոց թեմի եւ հայ համայնքի եկեղեցական հարցերի կարգավորման ուղղությամբ վերջին շրջանում սկսված դրական գործընթացների կապակցությամբ եւ վստահություն արտահայտեց, որ դրանք կառաջնորդեն հայորդիների հոգեւոր կյանքի խնդիրների ամբողջական լուծմանը:

Վրաստանի նախագահի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում կայացած հանդիպումներին ներկա էին Վրաստանում Հայաստանի դեսպան Հովհաննես Մանուկյանն ու Հայաստանում Վրաստանի դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՋԸ

Երկօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին էջմիածնում հանդիպեց բանակի իր ընկերոջը՝ Ռոբերտ Աբրահամյանին: Վրաստանի նախագահը facebook-ի պաշտոնական էջում տեղադրել է հանդիպման լուսանկարներն ու թողել գրառում, որ շատ երջանիկ է հին ու հարազատ ընկերոջը կրկին հանդիպելու համար:

Նախագահը գրել է, որ Ռոբերտ Աբրահամյանի հետ պատահական ծանոթացել էր փողոցում՝ էջմիածնի զորամասում ծառայելու ժամանակ, եւ մինչ օրս նրանք ընկերական հարաբերությունների մեջ են: Վրաստանի նախագահի խոսքով՝ նա չէր կարող չայցելել իր վաղեմի ընկերոջը, ով ժամանակին վեց ամիս իրեն խնամել է սեփական տանը: Հայ-վրացական հարաբերությունները պատմական են եւ այդ պատմական հարաբերությունների լավագույն արտացոլանքն իր ու Ռոբերտի ընկերությունն է:

Հանդիպմանը, Ռոբերտ Հարությունյանը նշել է, որ ընտանիքում շատ երջանիկ ու հպարտ էին, երբ Մարգվելաշվիլին ընտրվեց նախագահ: «Երբ կինս ասաց, որ Մարգվելաշվիլին եկել է Հայաստան, շատ ուրախացա: Իսկ երբ մեզ հայտնեցին, որ նա ցանկություն է հայտնել այցելել մեզ, հուզվեցի: Մենք անհամբերությամբ սպասում էինք այս այցին»,- հանդիպմանն ասել է Ռոբերտ Աբրահամյանը:

Աբրահամյանների ընտանիքը զբաղվում է երաժշտությամբ: Ռոբերտ Աբրահամյանը մի քանի երաժշտական գործիքի է տիրապետում եւ աշխատում է էջմիածնի Մակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցում:

* * *

Փետրվարի 28-ին էջմիածնից վերադառնալուց հետո, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին աշխատանքային ճաշին հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ, որից հետո Վրաստանի նախագահն ու նրան ուղեկցող անձինք վերադարձան Թբիլիսի: